




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

V285

C19260610

ԱՇԽԱՏԱՆԲ

ՊԱՊԻԿԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

№ 285

1926 թ.
30 MAY 2011

№ 7

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 7

ՍՁ 364
891.715
Լ-37

Հնդկանուր խմբագրություն
ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆՈՒ

Ն. ԼԵՇՁԻՆՍԿԻՑ

ԱՇԽԱՏԱՆՔ Պ Ա Պ Ի Կ Ը

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДОВЕДИЯ
Академии Наук
СССР

(Հին բայլեկի, իր փոքրիկներին պատմած ճեղքաթիւ)

Թարգմանությունը ուսուցիչից



Հ.Ս.Խ.Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

№ 302

ՄՈՍԿՎԱ

1925



Կլիշեները տրամադրել է Գ. ՄԻՐԻՄԱՆՅԱՆԻ
Հրատարակչությունը:
Շապիկը՝ Մ. ՄԱՋՄԱՆՅԱՆԻ:



60594-67

Главлит № 35375

Тип. Госиздата ССР. Армении,

Тираж 3000

Москва, Арм. пер. № 2.



ԱՇԽԱՏԱՆՔ ՊԱՊԻԿԸ

Մի անգամ Սուրիկն ու փոքրիկ Գոհարիկը հայրիկի և մայրիկի հետ գնացին անտառ՝ սուճիկի:

Սուրիկը յոթ տարեկան էր, Գոհարիկը՝ հինգ տարեկան:

Անտառում նրանք նստեցին փափրիկ կանաչների վրա և լսում էին թռչունների յերգը: Դիտում թե ինչպե՛ս միջատները շարժվում էին կանաչների մեջ, ծառերից վեր բարձրանում կամ թռչում էին ողում:

Արևը փայլում էր հաճելի և ուրախ: Զվարթ էր անտառը:

Յե՛վ անա հայրն ասում է.

— Յես ու մայրիկն այստեղ կը կարդանք, իսկ դուք, յերեխաներ, գնացեք սուճիկեր փնոցեք:

Յերեխաները գնացին:

Հանկարծ մի մեծ տերևաշատ կաղնու տակ նստած է մի մե՛ծ, մե՛ծ, հաղթանդամ մարդ և սիրալիբ ժպտում է իրենց: Այդ մարդու գլուխը խոշոր էր, դեմքը գեղեցիկ, աչքերը սև, ինչպես իրենց հոր աչքերը, բայց ավելի մեծ, ավելի խոշոր քան իրենց հոր աչքերը և բարի, շատ բարի: Մորուքը մեծ և սպիտակահեր, կարծես արծաթ թելերից լիներ, մատները յերկար, գեղեցի՛կ, գեղեցի՛կ:



— Հէ՛յ, դո՛ւք, Հոկտեմբերի ճուտիկներ, — ասաց մարդը, —
յեկեք այստեղ, այստեղ սունկեր շատ կան, այն ել լավ սունկեր:

Յերեխաները սկզբում կարծես նրանից վախեցան. բայց մարդը
նրանց այնպե՛ս սիրալիր ժպտաց, վոր նրանք դադարեցին վախե-
նալուց:

— Հէ՛յ, դո՛ւք, Հոկտեմբերի ճուտիկներ, — ասաց մարդը, — յե-

կեք այստեղ, այստեղ սունկեր շատ կան, այն ել լավ սունկեր:

Յերեխաները գնացին: Տեսան, վոր իսկապես, մարդու չորս
բոլոր լավ սունկեր շատ կան:

— Ինչե՞րիդ ե պեսք սունկը, — հարցրեց մարդը:

— Մայրիկս պիտի յեփի, — ասաց Սուրիկը:

— Նրանք շա՛տ համեղ են, մսից ավելի համեղ, մենք սունկ
շատ ենք սիրում, — ասաց Գոհարիկը:

— Իսկ միսը մի՞թե համեղ չե, — հարցրեց մարդը:

— Իսկ յես չեմ ուզում, վոր մեր աքաղաղին կամ հավերին
մորթեն, յես խղճում եմ, — ասաց Սուրիկը:

— Ահա թե ի՛նչ, — ասաց մարդը, — հասկանում եմ: Դե լավ:

Ապրե՛ք յերեխաներ:

— Դուք ե՞լ եք սունկերի յեկել, — հարցրեց Սուրիկը:

— Յե՛ս, դե՛, — սիրալիր ժպտեց մարդը, — այո՛, բալիկներ,
յես ել եմ սունկի յեկել: Այստեղ հանգստանում եմ:

— Իսկ վո՛րտեղ եք ապրում, — հարցրեց Գոհարիկը, վոր առաջ
չեք համարձակվում հարց տալ, — հեռո՞ւ եք ապրում:

— Վո՛րտեղ ե ձեր տունը, — վրա բերեց Սուրիկը:

— Իմ տո՞ւնը, — ծիծաղեց մարդը — իմ տունը սարի վրա յե,
յերեք պատուհան բակի վրա յե... Իմ տունն ամեն տեղ ե: Յես
ապրում եմ ամեն տեղ: Վորտեղ վոր աշխատավոր մարդիկ են ա-
պրում ու աշխատում, յես ել այնտեղ եմ ապրում:

— Իսկ վո՛րտեղ եք քնում, — հարցրեց Գոհարիկը:

— Յես, սիրելիս, քնում եմ այնտեղ, վորտեղ քնում են բո-
լոր աշխատավոր մարդիկ:

— Մահճակալի՞ վրա, — հարցրեց Գոհարիկը:

— Այո՛, անուշիկս, մահճակալի վրա...

— Իսկ ի՞նչպես են ձեզ կոչում, — հարցրեց Սուրիկը:

— Ինձ, մանկիկներ, կոչում են Ա շ խ ա տ ա ն ք, — պատաս-
խանեց մարդը: — Այո՛, ա շ խ ա տ ա ն ք, — այդպես ե իմ անունը:
Ա՛յ, եզ կոչում են Սուրիկ, իսկ քրոջդ ինչպե՛ս են կոչում:

— Գոհարիկ:

— Ահա, իսկ ինձ կոչում են ա շ խ ա տ ա ն ք, հասկանում ե՞ս:

— Հասկանում եմ, — գլուխը շարժեց Սուրիկը:

— Իսկ դուք հայր ու մայր ունե՞ք, — հարցրեց Գոհարիկը:

— Ա՛յ, նստեցեք այստեղ, ինձ մոտ ու յես կը պատմեմ, թե
ո՞վ յեմ յես: Ուզո՞ւմ եք:

— Դուք մեզ հեքյա՞թ կպատմեք, — հարցրեց Սուրիկը, վորի
աչքերը հետաքրքրությունից ու անհամբերությունից փայլեցին: Նա



Ինձ, մանկիկներ, կոչում են Աշխատանք:

հեքիաթներ շատ եր սիրում:

— Այո՛, յերեխաներ, յես ձեզ կպատմեմ հեքյաթ՝ իմ մասին:


— Իսկ հետաքրքիր հեքյաթ ե, — հարցրեց Սուրիկը:

— Շա՛տ հետաքրքիր, — ասաց Աշխատանքը: — Ա՛յ կտեսնես:

Յերեխաները նստեցին: Ու Աշխատանքը պատմել սկսեց.

— Յես ծնվել եմ վաղուց-վաղուց: Վաղուց ե ինչ ապրում եմ աշխարհում, շա՛տ շա՛տ տարիներ...

— Իսկ քանի՞ տարեկան եք դուք, — հարցրեց Սուրիկը:



Ապրում եյին, վոչ այնպես, ինչպես հիմա մենք մարդիկս ենք ապրում, այլ ինչպես անտառի զագանները:

— Յե՛ս, մանկիկ, մի քանի՛ հազար տարեկան եմ: Ա՛յ, արդեն ծեր եմ...

— Դուք արդեն պապի՛կ եք, — հարցրեց Գոհարիկը:

— Այո՛ մանկիկ, յես արդեն պապ, ապուպապ եմ: Յերբ յես հայտնվեցի աշխարհում, մարդիկ ինձանով շատ ուրախ եյին: Առանց ինձ նրանց համար շատ վատ եր, առանց ինձ, իրենց համար վոչինչ չեյին կարողանում անել: Ապրում եյին վոչ այնպես,



Սկսեցի նրանց սովորեցնել, թե ինչպե՞ս պետք է ճաշ յեփել, ցորեն ցանել, ինչպե՞ս ալյուր պատրաստել:


Ինչպես հիմա մենք ենք ապրում, այլ ինչպես անտառի գաղան-ները:

— Ինչպես գայլե՞րը, ինչպես արջե՞րը, — հարցրեց Գոհարիկը, աչքերը չռելով:

— Այո՛, մանկիկս, ինչպես գայլերը, ինչպես արջերը, — ասաց Աշխատանքը: — Յես նրանց կամաց կամաց սկսեցի ոգնել, վորքան կարողանում եյի. յես այն ժամանակ դեռ փոքր եյի, թույլ...

— Այնպես ինչպես յե՞ս, — հարցրեց Սուրիկը:

— Այո՛, — ասաց Աշխատանքը: — Իսկ հետո, սկսեցի նրանց սովորեցնել, թե ի՞նչպես պետք է ճաշ եփել, ցորեն ցանել, ի՞նչպես ալյուր պատրաստել, հաց թխել: Առաջ նրանց վրա հարձակվում եյին վայրի գաղանները և ուտում: Յես նրանց սովորեցրի մուրճ, կացին, իսկ հետո ել հրացան պատրաստել, վորպեսզի սպանեն այդ կենդանիներին և դրանով պաշտպանվեն: Հետո նրանց սովորեցրի



Յես նրանց համար կառուցեցի մեծ, գեղեցիկ տներ, թատ-րոններ, զբոսավայրեր:

մահճակալ շինել, վորի վրա կարողանային քնել...

— Իսկ առաջ վորտե՞ղ եյին քնում, — հարցրեց Սուրիկը:

— Քնում եյին փողոցում, ճիշտ այնպես, ինչպես հիմա մեր շները: Կուլ եյին տալիս ինչ գտնում եյին գետնի վրա, կամ ուտում եյին անտառի վայրի տանձ կամ խնձոր: Իսկ յես նրանց սովորեցրի քաղցր ուտելիքներ ու ճաշ յեփել, խմորեղեններ պատրաստել և նման բաներ: Ե՛, ապրում եյինք շատ լավ: Միասին աշխատում եյինք, միասին ուտում-խմում, միասին զբոսնում, մեկ խոսքով ապրում եյինք մի ընտանիքով: Մարդիկ բոլորը յերջանիկ եյին, ինձնից շնորհակալ եյին և քանի գնում եր ել ավելի ու ավելի: Ու ինձ անվանեցին Աշխատանք:

— Դա լա՞վ անուն է, — հարցրեց Գոհարիկը:

— Այո, լա՛վ, — պատասխանեց Աշխատանքը:

— Գեղեցիկ է, — ասաց Սուրիկը, ուրախ ժպտալով:

— Ահա այդպես ամենքս խաղաղ ու հաշտ ապրում եյինք: Մարդկանց համար շատ լավ եր այդպես: Յես ել ինձ լավ եյի ըզգում նրանց մոտ: Նրանք ինձ շա՛տ եյին սիրում նրա համար, վոր

յես նրանց աշխատել սովորեցրի: Յերբեմն մեզ վրա հարձակվում էյին չար, սարսափելի մարդիկ, մարդակերները, այսինքն այնպիսի մարդիկ, վորոնք վայրի գազանների, որինակ, գայլի կամ վագրի նման՝ մարդիկ են ուտում: Այդ մարդիկը, մարդակերները, ավելի սարսափելի յեն քան ահուելի գազանները: Ահա, մենք այդ մարդակերներին չեյինք վախենում, մենք վերցնում էյինք մեր գենքերն և բոլորս միասին, խմբով դուրս էյինք գալիս նրանց դեմ կռվելու, ջարդում էյինք նրանց ու քշում մեր գյուղից հեռու... հասկացա՞ք:

— Հասկացանք, — գլխով արավ Սուրիկը:

— Ահա այդպես անցան տարիներ: Մարդիկ քանի գնում բազմանում էյին: Շարունակ նոր մարդիկ էյին հայտնվում: Առաջ նրանք փոքր էյին, ապա ավելի մեծացան, հասակ առան: Յեվ ահա այդ նոր մարդիկ դադարեցին ինձ սիրել, դադարեցին ինձ լսել. սկսեցին անել այն, ինչ լավ չէ: Յես նրանց սովորեցնում էյի լավ բաներ, աշխատում էյի նրանց համար, իսկ նրանք չարանում էյին: Յես նրանց համար կառուցեցի մեծ, գեղեցիկ տներ, թատրոններ, զբոսավայրեր, այգիներ՝ քաղցր մրգերով: Նրանց համար կարում էյի գեղեցիկ հագուստներ, գեղեցիկ կոշիկներ: Պատրաստում էյի համեղ կարկանդակներ, քաղցրավենիքներ, շոկոլադ ու գինի և նման բաներ: Նրանք ուտում, խմում, զբոսնում էյին և հայհոյում ինձ: Դե իհարկե, յես վերավորվեցի նրանցից: Այդ նրանց ավելի կատաղացրեց: Նրանք ինձ փակեցին մի մեծ նկուղում, վորտեղից յես վոչ մի կերպ չեյի կարող դուրս գալ և այնտեղ որ ու գիշեր նրանց համար աշխատում էյի:


— Իսկ յե՞րբ էյիք քնում, — հարցրեց Սուրիկը, վոր սկսել եր խղճահարվել:

— Յես նույն իսկ չեյի քնում, չեյի հանգստանում, այլ շարունակ աշխատում էյի նրանց համար: Յեվ ահա, իմ Հոկտեմբերյան բալիկներս, դրուժյունս շա՛տ վատ դառավ, շա՛տ վատ: Յես ցանկանում էյի դուրս գալ զբոսանքի, գնալ անտառ, իսկ նրանք ինձ չեյին թողնում և չարչարում էյին...

— Իսկ մի՞թե դուք չեյիք կարող ազատվել նրանցից, չե՞ վոր դուք այնքան մեծ եք, — հարցրեց Սուրիկը:

— Յես այն ժամանակ դեռ այսքան մեծ չեյի: Իսկ նրանք շատ էյին, նրանք ուժեղ էյին: Յես ուզում էյի նրանց չեղոքացնել, սկսեցի բարկանալ, ճչալ: Այն ժամանակ նրանք իմ դեմքին հագցրին դնչակալ, ա՛յ, այնպես, ինչպես դնում են շների դնչին, վորպեսզի մարդկանց չկծեն. իմ բերանը փակեցին, վորպեսզի յես չը կարողանամ խոսել...

— Ապա ի՞նչպես էյիք ապրում, — հարցրեց Գոհարիկը հազիվ լացը զսպելով:



Դրուժյունս վատ դառավ, շա՛տ վատ:

— Այնպես, ապրում էյի շնից ավելի վատ. նրանք իրենց շներին պահում էյին սենյակներում, իսկ ինձ նկուղում... Ե՛հ... սոսկալի որեր էյին: Այդպես շատ տարիներ անցան... Մի անգամ ինձ համար ունեւիժի նման մի լավ և սուր գործիք շինեցի, ահա այդ գործիքով պոկեցի դնչակալը: Յերբ նրանք այդ տեսան, ինձ սաստիկ ծեծեցին, հագցրին ավելի դիմացկուն, յերկաթյա ու հաստ դնչակալ և շղթաներով ինձ կապեցին պատից, վորպեսզի չկարողանամ վոչ մի կողմ շարժվել ու անգամ ճեղքից լույս տեսնել... Յեվ ահա, սիրելիներս, այնպե՛ս վատացավ դրուժյունս, հիշելիս սարսափում եմ... Հենց վոր հիշում եմ, ուզում եմ լաց լինել... Այդպես յերկար ինձ տանջեցին: Շա՛տ շատ տարիներ անցան, յես շարունակ տանջվում էյի: Բայց ահա մի անգամ փողոցից լսեցի ինչ վոր աղմուկ: Սկսեցի ականջ դնել ու լսեցի, վոր մարդիկ ճշում են, վիճում են, կարծես կռվում են: Ապա հանկարծ նկուղիս դուռը բացվեց և տեսնում եմ, մտնում ե մի մեծ,

շատ մեծ, ինձանից ավելի մեծ մարդ, իսկական հսկա, ուժեղ, գեղեցիկ, ինձանից ավելի գեղեցիկ, կարմիր հագուստներով, խոշոր կրակի նման կոճակներով, վորոնք կարծես այրվող կարմիր աստղեր լինեյին։ Կողքից վոսկյա թուր կախ արած, գլխին կարմիր գլխարկ՝ արևի նման փայլուն, վրան կրակե փետուրներով զրված «Հոկտեմբերյան հեղափոխություն»։ Յես նույն իսկ զարմացա։ Ս կգրում անհավատալի թվաց ինձ։ Ու ահա այդ հսկան՝ Հոկտեմ-



Ահա այդ հսկան՝ Հոկտեմբերյան Հեղափոխությունը դեսքիցս պոկեց ղնչակալը, փշրեց շղթաներս։

բերյան հեղափոխությունը դեսքիցս պոկեց ղնչակալը, փշրեց շղթաներս և ասաց։

— Գնա, իմ հարազատ հայրս, գնա ուր վոր ուզում ես։ Դու ազատ ես։ Ինձ չե՞ս ճանաչում,—հարցրեց նա։

— Այդտեղ յես ճանաչեցի իմ վորդուն։ Մենք գրկախառնվեցինք, համբուրվեցինք և սկսեցինք խոսել դեսից-դենից։

— Յես նրան պատմեցի, թե ինչպես եյին ինձ տանջում։ Նա ասաց։

— Հայր իմ, մի վախենա, այդ ել չի՛ լինի։

— Այդ ժամանակից, սկսեցի լինել այնտեղ ուր ցանկանում եմ։ Յերբեմն դժվար եյի գտնում ուտելու բան, կամ քնելու տեղ։ Բայց այդ վոչինչ։ Աշխատող մարդիկ շատացան, նրանք ինձ սիրում են ու յես ինձ լավ եմ զգում։ Ավելի շատ նրանց մոտ եմ լինում, ովքեր լավ են աշխատում և ավելի շատ են սիրում ինձ, իսկ ինձ չսիրողներից յես խուսափում եմ։ Նրանք իմ յետևից են ընկում, ուզում են բռնել, նորից շղթայել ու բերանս փակել։ Բայց յես նրանց ձեռքն ել չեմ ընկնի։ Յես հիմա գիտեմ, թե ինչպես պետք է կռվել նրանց հետ։ Իմ հսկա վորդին՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը սովորեցրեց և ոգնում է ինձ նրանց հետ կռվել։ Ասենք հիմա յես ինքս ել եմ մեծ։ Տեսնո՞ւմ եք, ինչքան խոշոր եմ։—Աշխատանքը վորքի կանգնեց ու նա անտառից շատ ու շատ բարձր եր։ Այնքան մեծ եր նա, վոր յերեխաները կարծես վախեցան ու վեր թռան։ Բայց Աշխատանքը նստեց նորից ու քիչուշ ժպտաց, յերեխաներն ել ահամա ծիծաղեցին և նորից նստեցին նրա կողքին։

— Ինձանից վախեցա՞ք,—հարցրեց Աշխատանքը։

— Վո՛չ,—զվարթաթյամբ պատասխանեց Սուրենը,—մենք ձեզանից ել չենք վախենում։

— Իսկ հիմա գիտե՞ք, թե ինչպես են կոչում ինձ,—հարցրեց Աշխատանքը։

— Գիտե՞նք,—պատասխանեցին յերեխաները միաձայն,—ձեզ կոչում են Աշխատանք։

— Աշխատանք պապիկ,—ասաց Սուրենը ուրախությունից վեր թռչելով։

— Այդպես, սիրելիներս, Աշխատանքից չվախենաք, սիրեցեք նրան, հարգեցեք Աշխատանքին և ամեն ուր աշխատեցեք և յերկրիս վրա կապրեք լավ։ Ամեն ինչ, ինչ վոր ուզեք, կունենաք։ Վոչ վորքից չեք վախենա և վոչինչ ձեզ համար սարսափելի չի լինի։ Դուք կլինեք աշխարհի ամենագորեղները։

— Այն ժամանակ յես ինքս մենակ կգամ անտառ և վոչ վո-




Աշխատանքը փոտքի կանգնեց ու նա անտառից շատ ու
շատ բարձր եր:

քից չեմ վախենա, — ասաց Սուրենը:

— Յե՛ս ել, — ասաց Գոհարիկը:

Ա՛յո, ա՛յո, — ասաց Աշխատանք պապիկը, — դուք յերկուսդ
ել ուժեղ կլինեք... Դե՛, իսկ հիմա ցաւեսութիւն: Ելի կտեսնովներ...

— Աշխատանք պապի՛կ, գնանք մեզ մօտ, — խնդրեցին յերե-



Յե՛ս զալիս եմ՝ ձեր նոր մօտը, յերբ դուք քնած եք լինում ու նրա
հետ գնում եմ աշխատանքի:

խաները:

— Վաղը կգամ ձեզ մոտ, այսօր տոն է,—ասաց Աշխատանք պապիկը:

— Իսկ դուք գիտե՞ք, թե մենք վորտեղ են ապրում,—հարցրեց Գոհարիկը:

— Գիտե՛մ, գիտե՛մ, սիրելիներս: Յես ամեն ուր լինում եմ ձեզ մոտ, բայց դուք ինձ չեք նկատում, դուք դեռ փոքրիկ հոկտեմբերականներ եք: Յես գալիս եմ ձեր հոր մոտը, յերբ դուք քնած եք լինում ու նրա հետ գնում եմ աշխատանքի: Յերբ կմեծանաք, կսկսեք սովորել, աշխատել, այն ժամանակ ինձ ձեր տանը ամեն ուր կտեսնեք:

— Աշխատանք պապիկ հրաժեշտ տվեց ու գնաց:

— Աշխատանք պապի՛կ, Աշխատանք պապի՛կ,—նրա յետևից կանչեցին յերեխաները...

— Ի՛, Ի՛,... պատասխանեց նա անտառի հեռավոր խորքերից:



<< Ազգային գրադարան



NL0383659

3453

ԳԻՆԸ 25 ԿՈՊԵԿ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



891.715
Լ-37